«Հաստատում եմ»
Դպրոցի տնօրեն՝ ———— Ս. Պողոսյան
30. 08. 2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ IVԳ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Քրիստինե Վասակի Բեգլարյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը ուսումնական տարվա սկզբին .

IV Գ դասարանը բաղկացած է 21 աշակերտից՝ 7 տղա և 14 աղջիկ: Դասարանում ստեղծված է միասնական, համերաշխ, ջերմ կոլեկտիվ: Ամենօրյա աշխատանք է տարվում դպրոցի կարգ ու կանոնին հետևելու ուղղությամբ: Աշակերտները դպրոց հաճախում են հաճույքով, մեծ սիրով ու պատրաստ՝ դիմակայելու ուսումնական դժվարություններին:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

Ստեղծել գիտակցական վերաբերմունք ուսման նկատմամբ : Սերմանել դրական վերաբերմունք դպրոցի, ուսուցչի, ընկերոջ, շրջապատող աշխարհի նկատմամբ: Դասարանում կարգապահական նորմերի, հերթապահության, հասարակական աշխատանքների կազմակերպում և իրագործում:

1 .Հայեցի դաստիարակություն.

Դաստիարակել հայրենասիրություն, սեր սերմանել հայրենիքի նկատմամբ, ձևավորել պարտքի և պատասխանատվության զգացում,գնահատել հայկականը և հավատարիմ մնալ հայկական ավանդույթներին:

2. Հոգևոր դաստիարակություն.

Դաստիարակել հոգևոր արժեքները գնահատելու և դրանց հետևելու կուլտուրան:Ներկայացնել հայկական մշակույթը և հոգևոր պատմությունը: Գնահատել կրոնի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պահպանման գործում:

3.Գեղագիտական դաստիարակություն.

Արթնացնել սեր արվեստի, գրականության նկատմամբ: Դաստիարակել գեղագիտական բարձր ճաշակ: Հասնել այն բանին, որ աշակերտները կարողանան տեսնել և գնահատել գեղեցիկը:

4.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

Սա նպատակաուղղված գործընթաց է, որի նպատակը մատաղ սերնդի հայրենասիրության, հայրենիքի նկատմամբ պատասխանատվության ու պարտքի զգացում դաստիարակելն է:

5.Ֆիզիկական դաստիարակություն.

Զնավորել ֆիզիկապես կոփված, առողջ անհատներ: Դաստիարակել սեր ֆիզկուլտուրայի, սպորտի նկատմամբ: Կարևորել սպորտի դերը երեխայի առողջ զարգացման գործում:

6.Աշխատանքային դաստիարակություն.

Դաստիարակել սեր մեծերի կատարած աշխատանքի նկատմամբ: Սեր սերմանել դեպի աշխատանքը: Դասարանում սահմանել ամենօրյա հերթապահություն և հետևել դասասենյակի մաքրությանը , ծաղիկների խնամքին:

7.Բնապահպանական դաստիարակություն.

Արթնացնել սեր և հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ: Սովորեցնել ճանաչել բնությունը, գնահատել նրա դերը, հիանալ գեղեցկությամբ: Խնամել և պահպանել մեզ շրջապատող բնության յուրաքանչյուր մասնիկը:

8.Դպրոց-ընտանիք կապը.

Ստեղծել և ամրապնդել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, հաճախակի անցկացնել հանդիպումներ ծնողների հետ, որպեսզի կրթվի և դաստիարակվի հասարակությանը պիտանի սերունդ:ս

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ
I	Գիտելիքի օր	Սեպտեմբեր
II	<<Օրվա ռեժիմ >> զրույց քննարկում	Սեպտեմբեր
III	Անկախության օր	Սեպտեմբեր
IV	Անվտանգ երթևեկություն	Սեպտեմբեր
V	Ուսուցչի օր	Հոկտեմբեր

VI	Ինչպես պաշտպանվել վարակներից	Հոկտեմբեր
VII	Տարերային և բնական աղետներ։ Ի՞նչ է բնական աղետը	Հոկտեմբեր
VIII	Իրավունքներ և պարտականություններ	Հոկտեմբեր
IX	Առաջին բուժօգնություն	Նոյեմբեր
X	Զրույց << Ես արդեն մեծ եմ >> թեմայի շուրջ	Նոյեմբեր
XI	Օգտակար և վնասակար սովորություններ	Նոյեմբեր
XII	<<Ինչ եմ երազում դառնալ >> թեմայի շուրջ զրույց-քննարկում	Նոյեմբեր
XIII	Սպիտակի երկրաշարժ	Դեկտեմբեր
XIV	Զրույց հոգեբանի հետ	Դեկտեմբեր
XV	Հայկական ավանդույթներ	Դեկտեմբեր
XVI	Ամանոր և Սուրբ Ծնունդ	Հունվար
XVII	Ճանաչիր քո հայրենիքը	Հունվար
XVIII	Հայոց բանակի օր	Հունվար
XIX	Բարություն։ Լավ ու վատ գործեր	Փետրվար
XX	Տեառնընդառաջ	Փետրվար
XXI	Գրքի դերը մարդու կյանքում	Փետրվար
XXII	Կոնֆլիկտ։ Ինչպես խուսափել կոնֆլիկտներից	Փետրվար
XXIII	Ինչ է քաղպաշտպանությունը	Մարտ
XXIV	Կանանց միջազգային տոն	Մարտ
XXV	Հանդուրժողականություն։ Ինչու պետք է հանդուրժեմ	Մարտ
XXVI	Ընկերություն	Մարտ
XXVII	Ծիծաղի և հումորի օր	Ապրիլ
XXVIII	Ս. Հարություն կամ Ս. Զատիկ	Ապրիլ
XXIX	Ավետման և մայրության տոն	Ապրիլ
XXX	Հայոց Մեծ Եղեռն	Ապրիլ
XXXI	Ինչպես օգնել մարդկանց	Մայիս
XXXII	Հաղթանակի օր	Մայիս
XXXIII	Ընտանիքի դերը երեխայի կյանքում	Մայիս

XXXIV	Ուսումնական տարվա ամփոփում	Մայիս

Դասղեկ՝ Ք. Բեգլարյան